թյունն իրականացվում է իրավագիտական հատուկ դիսցիպլինների շրջանակներում (քրեագիտություն, քրեաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեություն, իրավաբանական հոգեբանություն և այլն): Հետևապես, որքան շատ մեթոդներ են կիրառվում ստվերային այս կամ այն գործարքի կամ տնտեսական հանցագործության բացահայտման ու ապացուցման նպատակով, այնքան հիմնավոր և անհերքելի են դառնում ձեռք բերված տվյալներն ու ապացույցները: Սա էլ նշանակում է, որ ստվերային տնտեսության բացահայտման և դրա ծավալների քանակական գնահատման մեթոդաբանությունը պետք է լինի հնարավորինս համալիր և ապահովի ոչ միայն ընդհանուր միտումի, օրինաչափության և գործընթացի, այլև դրա առանձին բաղադրիչների և առանձնահատկությունների վերհանումն ու հիմնավորումը:

ԼԵՎՈՆ ԿԱԿՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոչարյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՎԵՆՉՈՒՐԱՅԻՆ ԻՆՎԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Քսանմեկերորդ դարում մարդկության զարգացումն ապահովող կարևորագույն գործոններից մեկը նոր, ավելի արդյունավետ տեխնոլոգիաների կիրառումն է: Արևմտյան երկրների փորձը ցույց է տալիս, որ վենչուրային կապիտալի (վենչուրային ինդուստրիայի) ձևավորումը կարող է մեծապես նպաստել տնտեսության զարգացմանը: Այլ կերպ ասած ՀՀ-ում ձևավորվող նոր տնտեսական գործընթացին կարող է էապես օգնել վենչուրային համակարգի ստեղծումը:

Ստորև ներկայացնում ենք ՀՀ-ում նման համակարգի ձևավորմանն առնչվող հիմնախնդիրների շուրջ մեր նկատառումները:

ՀՀ-ում այդպիսի համակարգի ստեղծումը կպահանջի հանրապետության նախագահի հովանավորությամբ կազմակերպել խորհուրդ, որին պետք է ուղղված լինի այդ համակարգի գործունեությունն ապահովող նորմատիվային, կազմակերպական և տնտեսական խնդիրների լուծմանը:

Համակարգի ստեղծման միջոցով պետք է ապահովվի այնպիսի իրավական-նորմատիվային ակտերի ընդունում, որոնք կարողանան լիարժեք դարձնել վենչուրային-ներդրումային համակարգի գործունեությունը գիտատեխնիկական ոլորտում:

Այդ ուղղության ներդրման համար կպահանջվի.

- ստեղծել վենչուրային-ներդրումային հարաբերությունները կարգավորող նորմատիվային-իրավական հիմքեր,
- համակարգի ստեղծման համար պահանջվող ֆինանսական միջոցներն ապահովելու համար պետության օժանդակություն,
- օրենսդրական փոփոխություններ (մաքսային և հարկային ոլորտներում),
- պետության կողմից երաշխիքների տրամադրում:

Համակարգի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ է զարգացած երկրորդային ֆոնդային շուկայի և վենչուրային ձեռնարկությունների արժեթղթերի առկայություն՝ համապատասխան էլեկտրոնային առևտրային համակարգերով, որոնց անհրաժեշտությունը ՀՀ-ում ժամանակի հրամայական պահանջն է:

Այդ համակարգի տարածաշրջանային և ոլորտային ուղղվածությունը ենթադրում է մարզային և ճյուղային վենչուրային-ներդրումային համապատասխան ինստիտուտների ձևավորում, կադրերի պատրաստում: Խոսքը վերաբերում է այնպիսի վենչուրային ինստիտուտների ստեղծմանը, որոնք կկարողանան ներգրավել տեղական և արտասահմանյան մասնավոր կապիտալ և դրանցով ներդրումներ կատարել Հայաստանի վենչուրային ձեռնարկություններում:

Տարբեր գերատեսչություններին պատկանող վենչուրային ինստիտուտների գործունեության կոորդինացման նպատակով անհրաժեշտություն կառաջանա ստեղծել նաև միջգերատեսչական խորհուրդ, որի գործունեությունը պետք է ուղղված լինի երկրում վենչուրային-ներդրումային համակարգի ներդրմանն ու զարգացմանը: Այդ խորհրդի միջոցով լուծվող խնդիրների շարքում կարելի է առանձնացնել.

- գիտատեխնիկական ոլորտում ներդրումներ ապահովելուն ուղղված որոշումների ընդունումը և համապատասխան մարմինների համար առաջարկությունների և դրանց իրականացման մեխանիզմների մշակումը,
- արտերկրի վենչուրային-ներդրումային փորձի վերլուծությունը և ՀՀ պայմաններում դրա կիրառման հնարավորությունների գնահատումը,
- շահագրգիռ կազմակերպություններին տեղեկատվության տրամադրումը և իրազեկության ապահովումը,
- մեթոդաբանական և կազմակերպչական հարցերի տարաբնույթ առաջարկությունների մշակումը:

Վենչուրային-ներդրումային համակարգի ձևավորման կարևոր խնդիրներից է նաև կադրերի պատրաստումը, այդ թվում նաև ղեկավար:

Վենչուրային-ներդրումային համակարգի ստեղծումը և զարգացումը բնականաբար կպահանջեն համապատասխան ֆինանսական միջոցներ: Կարծում ենք՝ այդ նպատակով կարելի է ստեղծել վենչուրային-ներդրումային հիմնադրամ, որում իր մասը պետք է ունենա նաև պետությունը: Այդ գործընթացին պետական միջամտությունը կարող է օժանդակել նաև այլ աղբյուրներից միջոցների ներգրավմանը: Նկատենք, որ այդ հիմնադրամը համակարգի ներդրմանը կծառայի սկզբնական փուլում, իսկ հետագայում այն կարող է դառնալ համապատասխան ֆինանսական ներդրումների աղբյուր: Այդ հիմնադրամի միջոցները կօժանդակեն նաև համապատասխան մարզային և գերատեսչական վենչուրային-ներդրումային ինստիտուտների ձևավորմանը:

Վենչուրային-ներդրումային համակարգի տնտեսական արդյունավետության չափանիշ կարող են հանդիսանալ ներգրավված միջոցների ծավալները:

Ինչպես արդեն նշել ենք, Հայաստանում վենչուրային ինվեստավորման համակարգի ստեղծման համար անհրաժեշտ է կազմակերպել նորմատիվային, կազմակերպչական և տնտեսական ուղղվածություն ունեցող խորհուրդ ՀՀ նախագահի հովանավորությամբ: Համակարգի զարգացման առաջին նորմատիվային ուղղությունը ներառում է այնպիսի նորմատիվային իրավական ակտերի ընդունումը, որոնք կապահովեն վենչուրային ինվեստավորման համակարգի արդյունավետ գործողությունը գիտատեխնիկական ոլորտում: Այդ ուղղության շրջանակներում պետք է նախատեսել՝

- նորմատիվային իրավական բազայի կազմավորում, որը կարգավորում է վենչուրային ինվեստավորման հարաբերությունները,
- վենչուրային ինվեստավորման համակարգի պետական օգնության միջոցների ապահովում, այդ թվում կատարել փոփոխություններ և լրացումներ հարկային և մաքսային օրենսդրություններում, ինչպես նաև պետական երաշխավորությունների տրամադրում:

Վենչուրային ինվեստավորման համակարգի զարգացման կառավարչական ուղղությունը ենթադրում է պետական, մարզային և ճյուղային վենչուրային ինվեստիցիոն ինստիտուտների

կայացում, ինչպես նաև կադրերի պատրաստում: Այդ ուղղությամբ հիմնական խնդիրը մարզային և ճյուղային վենչուրային ինստիտուտների ստեղծումն է, որոնք կարող են ներգրավել հայկական և արտասահմանյան մասնավոր կապիտալի միջոցները և դրանք ներդնել հայկական վենչուրային ձեռնարկություններում: Այդպիսի ինստիտուտների ցանցի ստեղծման համար պետք է նախատեսել համապետական վենչուրային-ինվեստիցիոն հիմնադրամի ստեղծում: Նշված հիմնադրամի մասնագետները պետք է վերլուծեն ինվեստիցիոն պրակտիկան և տարածեն դրական փորձը, մշակեն և տարածեն կազմակերպական և մեթոդաբանական առաջարկությունները գիտատար ինովացիոն ծրագրերի ներդրումների համար: Բազմամակարդակ համակարգի շրջանակներում գիտատեխնիկական ոլորտի ինովացիոն գործունեության մենեջերների պատրաստման համար պետք է նախատեսել վենչուրային ձեռնարկության կադրերի պատրաստում:

Վենչուրային ինվեստավորման համակարգի զարգացման տնտեսական ուղղությունը որոշում է վենչուրային ինվեստավորման ֆինանսական միջոցները: Վենչուրային ինովացիոն հիմնադրամի ստեղծման պետական ֆինանսական մասնակցությունն ապահովվում է նրա մեջ սեփականության ներդրման միջոցով:

Այդ միջոցներնն օգտագործվում են հիմնադրամի գործունեության սկզբնական փուլում, հետագայում վենչուրային ինովացիոն հիմնադրամը կիրականացնի ինվեստիցիոն գործունեությունը իր կողմից ներգրավված միջոցների հաշվին:

Ռեգիոնալ և ճյուղային վենչուրային ինվեստիցիոն ինստիտուտները ստեղծվում են ի հաշիվ վենչուրային ինվեստիցիոն հիմնադրամի, շահագրգռված նախարարությունների գերատեսչությունների, արտասահմանյան ներդրողների և մասնավոր կապիտալի միջոցների:

Վենչուրային ինվեստավորման համակարգի տնտեսական արդյունավետությունը պետք է որոշվի ներգրավված արտաբյուջետային միջոցների ծավալներով: Գիտատեխնիկական ոլորտի զարգացման վենչուրային-ներդրումային համակարգի ստեղծումը կարելի է իրականացնել փուլային մոտեցումով՝ ներառելով հետևյալ փուլերը:

Առաջին փուլում պետք է նախատեսել գիտատեխնիկական ոլորտի համար վենչուրային-ներդրումային համակարգի իրավական նորմատիվային փաստաթղթերի մշակումը, վենչուրային-ներդրումային հիմնադրամի ստեղծումը, միջգերատեսչական կոորդինացիոն խորհրդի, վենչուրային ձեռնարկատիրական կադրերի պատրաստման կազմակերպումը: Երկրորդ փուլում՝ վենչուրային-ներդրումային համակարգի իրավական նորմատիվային ակտերի ընդունումը, ռեգիոնալ և ճյուղային ինստիտուտների ստեղծումը: Երրորդ փուլում՝ վենչուրային համակարգի ներդրումը, վենչուրային ձեռնարկությունների համար արժեթղթերի երկրորդային շուկայի լիարժեք աշխատանքի ապահովումը: Վենչուրային-ներդրումային համակարգի զարգացման համար Հայաստանում հիմնական խոչընդոտը գիտատեխնիկական ոլորտում ներդրումների զարգացման համար ռեսուրսների պակասն է: Սակայն, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձի վերլուծությունը, վենչուրային կապիտալը, որպես ֆինանսական միջոցների առանձնահատուկ աղբյուր, տնտեսական կյանքի է կոչված ոչ այնքան բյուջետային միջոցների պակասի պատճառով, որքան ժամանակակից փուլում գիտատեխնիկական առաջընթացի թելադրանքով՝ ինովացիաների վիճակից ելնելով: Վենչուրային կապիտալը առավել հարմարեցված է ինովացիաների վերարտադրության ներդրումային ապահովման համար, որն առնչվում էր մեծ քանակությամբ տարբեր ռիսկերի հետ: Ինչպես ցույց են տվել հետազոտությունները, վենչուրային ինվեստավորումը չի կարող փոխհատուցել միջոցների պակասը այլ աղբյուրներից, գիտատեխնիկական ոլորտի զարգացման համար: Այն օգտակար է իր հիմնական գործի՝ տնտեսական համակարգերի ինովացիոն ակտիվության զարգացման համար: Իզուր չէ, որ վենչուրային կապիտալի մասը ինվեստավորման ընդհանուր միջոցների մեջ մի քանի տոկոս է կազմում (բացի, իհարկե, ԱՄՆ-ից և Մեծ Բրիտանիայից):

Մասնագիտական գրականության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ վենչուրային ֆինանսավորման համակարգը իր կազմակերպչական կառուցվածքով, աշխատանքային մեխանիզմով հաստատուն վերականգնողական հիմք պետք է ապահովի վենչուրային-ներդրումային գործընթացների իրականացման համար: Սակայն, այլ ներդրումային ռեսուրսներից տարբեր, վենչուրային կապիտալն ունի յուրահատուկ կյանքի փուլերի ցիկլեր: Բացի դրանից, վենչուրային ներդրումների վերադարձը նույնպես իրականացվում է առանձնահատուկ ձևերով. նկատի ունենք «դուրս գալը» ինվեստիցիոն նախագծից: Այստեղից եզրակացնում ենք, որ վենչուրային ինվեստիցիոն համակարգը պետք է ներառի կառուցվածքներ և մեխանիզմներ, որոնք ապահովում են տվյալների անարգել «դուրս գալը»: Իսկ սա ուղղակիորեն կապված է արժեթղթերի շուկայի, վենչուրային կապիտալի, ինովացիոն շուկաների հետ: Այդ պատճառով էլ վենչուրային ինվեստիցիոն համակարգի բովանդակությունը, եթե ներկայացվում է պարզ համակարգի՝ «վենչուրային ինվեստիցիոն ինստիտուտների, վենչուրային ձեռնարկությունների, ինչպես նաև մասնագիտացված «ապասարկող կազմակերպությունների» հետ, ճիշտ չէ: Այսպիսի ընկալումը էապես աղքատացնում է նրա տնտեսական բնույթը, քանի որ համակարգը ոչ միայն տարրերի բազմություն է, այլ նաև գործընթացների, հարաբերությունների փոխադարձ կապերի բազմություն: Այդ ամենը նրան դարձնում է կենդանի, դինամիկ և ամբողջական օրգանիզմ: Այսինքն՝ դա այնպիսի օրգանական կառուցվածք է, որն ունի հատկություններ, որոնք չեն նույնացվում այդ կառուցվածքի մեջ մտնող տարրերի հատկությունների հետ:

Որպեսզի մեկ անգամ ևս ցույց տանք պետության դերի նշանակությունը վենչուրային կապիտալի ձևավորման հարցում, բերենք Իսրայելի օրինակը:

1993թ. Իսրայելի կառավարությունը 80 միլիոն դոլարով կազմակերպեց 10 նոր վենչուրային ֆիրմաներ: Այդ կապիտալը թույլ տվեց պոտենցիալ վենչուրային ներդնողներին դառնալ ԱՄՆ-ի վենչուրային ֆիրմաներին գործընկեր: Համատեղ նրանք վարձեցին որակյալ տեխնոլոգներ տարբեր երկրներից: Բարձրակարգ համաշխարհային մակարդակի կառավարիչներ վարձեցին ԱՄՆ-ից և Եվրոպայից: Հինգ տարի հետո նոր վենչուրային ֆիրմաները վաճառեցին իրենց սկզբնական ընկերությունները և վերցրած փողերը վերադարձրեցին պետությանը[1]: 2000թ. վենչուրային ներդրման ճյուղը Իսրայելում իր հաշվին ուներ մեկ միլիարդ դոլար:

Իհարկե, ՀՀ համար անհրաժեշտ է հաշվարկել սկզբնական գործունեության համար անհրաժեշտ գումարի չափը և վերը նշված գործառույթների իրականացման պայմաններում սկսել իրականացնել լայնածավալ աշխատանքներ երկրի հետագա տնտեսական զարգացման համար:

[1] Кэтрин Кембелл Венчурный бизнес. Альпина Бизнес Букс, Москва 2004.